



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

5325



84-2

R-24

ԹԵՂՈՐ ԴԵ ԲԱՆԳԻ.

ՍՈԿՐԱՏ ԵՒ ԻՒՐ ԿԻՆԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԱՎԱՐԱԿԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ՅՐԱՎԱԵՐԵՒԽ

Ա. Ա. ԵԶԵԿԵԼՅԱՆ



ՎԵՐԱՎԵՐԱ Ա. Ա. ԶԵԼՅԱՆ

1905

63

ԹԵՂԴՈՐ Դ.Բ. ԲԱՏՎԻՆԻ

ՍՈԿՐԱՏ ԵՒ ԻՒՐ ԿԻՆԸ



9.1.03. 2013

1001  
4578

8-27 | Чубинец 6  
суп борщ

WILCOX - 7006 | 3/11/81

84 4 yrs.

## ԹԵՂՈՐ ԴՅ ԲԱՆՎԻԼ


## ՍՈԿՐԱՏ ԵՒ ԻՒՐ ԿԻՆԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՄԵԿ ԱՐԱՐՈՒԹՅՈՎ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ՔՐԱՆՍԵՐԵՆԻՑ

Ա. Մ. Ե Զ Ե Կ Ե Ա Ն



ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

1905

905  
Tbilisi State University Library  
Central Scientific Library  
7/II. 1922  
M. Menava, Miasnikyan  
U. IZUMIRYAN

Bous Mal OS

5325

## ՍՈԿՐԱՏ ԵՒ ԻՒՐ ԿԻՆԸ

Գ Ո Բ Շ Ո Պ, Ա Ն Չ Ի Ն Ք

ՍՈԿՐԱՏ  
ՔՍԱՆՏԻՊ  
ՄԻՐՐԻՆ  
ԱՆՏԻՍԹԵՆԻՍ  
ՊՐԱՔՏԻԱՍ  
ԵՒՊՈԼԻՍ  
ԴՐԱԿԵՆ  
ՄԵԼԻՏՏԱՍ  
ԲԱՐԻ

Տեսարանն Աթէնքում է, Սոկրատի տան մէջ, 429  
թուականին Քրիստոսից առաջ:

Թռարթօնը ներկայացնում է Սոկրատի տան ներքուակողմեան փոքրիկ բակը: Աչ և ձախ պատերի առջեւ, որոնք իւրաքանչիւրն ունին մի մի զուռ՝ զէպի բնակարանները տանող, կայ փայտեայ սինակների մի շարք: Վեր պահէլով յառաջացած բիւր: Խորթի պատը, թանձր և մի զնոնք որ բացվում է գաւթի վրայ, ունի մի տանիք՝ ուր ծաղկում են մրտենին և զափնեվարդը: Հանզիսականի ձախ կողմից կամ մի քանի աթոռներ իրենց բարձերով: ալիս մի սեղան և մի բազմոց կամ հանգստոց: Վարագոյրը բացուելիս Սոկրատ, ուրի վրայ և անշարժ խօսում է ծանր և աչքն անթարթ, որպէս մի ներքին տեսիւրի մէջ խորասուզուած:

## ՏԵՍԻԼ Ա.Ա.Ա.ԶԻՆ

ՍՈԿՐԱՏ, յետոյ ՔՍԱՆՏԻՊ

ՍՈԿՐԱՏ<sup>1</sup>

Ողորմէլի և վայրաքարշ մարմինը  
Ենթակայ է ամէն տեսակ աղէտքի.  
իսկ ասողերի հաւասար  
Բարձր բարձր թոշում է  
Եւ լուսաշող երկնքում  
Սաւառնում է մեր հոգին:  
Նման ահեղ, աստուածակերպ մի հրէշքի,  
Բազմապատիկ ցոլացնելով նա աչքեր,  
Գիշերի մէջ և խաւաբչուա քառոս  
Վսեմական սոսկումներում ապրում է  
Եւ անդողի անէութեան մէջ լողում:

Սահուան գէմ էլ նա գտնում է ապաստան  
իւր իսկ բնիկ լաւութեան մէջ:  
ՔԱԱՆՏԻՊ, ներս է մտնում կանչելով Սոկրատին  
բարձր ձայնով

## Սոկրատէս.

Աւելի բարձր

Ա՛ Սոկրատէս, ի՞մ ամուսին

Առանձին

Նոյն է թէ

Քարին, փայտին ես ձայն տուել:

Յառաջ է զալիք բհմի վրայ և հասարակութեանն է ուզդում  
խօսք:

Արդպէս է,

Տեսաֆ հիմա, քաղաքացիք, իմ մարդը.

Թէկուզ ճաքուիմ միջից կէս, հոգը չէ:

Պատահել է քսանըշորս ամբողջ ժամ,

Մէկ արեւից մինչև միւսի ծագելը,

Արձանի պէս մնացել է դա անշարժ՝

Մտածմունքի խորըն ընկած, անտարբեր՝

Գիշեր է սեւ թէ արշալոյս վարդաքող:

Իսկ այդպիսի բովէներում իմ սիրուլ

Նեղութիւնից տրաքվում է, ինչ կասկած:

Այդ երազողն և այդ զարթուն քնածը,

Ո՞վ կ'ասէ թէ երիտասարդ մէկըն է,

Եւ թէ կինն էլ երիտասարդ է նոյնակս:

Զգում էլ չէ ուտում է թէ ծոմ պահում:

Միայն քառուն տարեկան է Սոկրատը:

Բան չեմ ասում, հանձարեղ է, արդարեւ.

Բայց ասացէք, ինչ կը լինի այդ խենթը,

Որի աչքը թափառում է ամպերում,

Երբոր ձիւնը ճաղատ գլխին մի օր զայ:

Ո՞ւմ ես ասում: Գնա, արի, ծիծաղիր,

Վակ ոտը, խօսիք. նորա համար իմ խօսքը

Կամ չիսէթի<sup>2</sup> մեղուի բզզոցը մէկ է:

Լաւ ուրեմն, որովհետեւ այդպիս է,

Հիմա ես էլ այն կերպ խօսիմ իւր հետը՝

Որ նա անշուշտ լոէ ձայնիս հնչիւնը:

Աղաղակելով, Սոկրատին:

Ա՛ Սոկրատէս: Մոլեցինկ: Դաւաճան:

Չար անաստուած: Կրկնակնին: Մատնին: Գորդ:

ՍՈՒՐԱՏ, սթափուելով որոճըլց հանդարա  
տութեամբ:

Ահ, կի՞նըս է. զսաս չունի:

ՔԱԱՆՏԻՊ

ԱՐԿԵՆ

Էլ աւելի կծուները կը լսես

ՍՈՒՐԱՏ

Վահ, ճշմարին:

ՔԱԱՆՏԻՊ

Ալկերիադ<sup>3</sup>, խոհական

Խմաստութեամբ, քեզ ընծայ է ուղարկում

Ուկի, արծաթ. իսկ գու յետ ես դարձնում:

ՍՈՒՐԱՏ

Լաւութեան մէջ ենք փնտուելու վայելքը:

ՔԱԱՆՏԻՊ

Քարմիդն<sup>4</sup> այստեղ ստրուկներ է ուղարկում,

Որ աշխատին մեզի համար, սակայն դու,

Սրամիտ բան, դու վոնտում ես նոցա,

Որովհետեւ կամքդ ես ուղում անել միշտ:

## ՍՈԿՐՈՏ

Ամենեւին: Ստրուկները մեզ ի՞նչ պէտք:

## ՔՍԱԽՏԻՊ

Նրանց վաստակով մեր տան բարին կ'աւելնար:

## ՍՈԿՐՈՏ

Հարուսող նաև է, ով բնաւ չունի բանի պէտք:

## ՔՍԱԽՏԻՊ

Բաս ի՞նչ կ'ուտենք: Քամի՞ թէ ծուխ կը տանք կուլ:  
Դու խօմ որ կաս, բան ու գործդ քո այս է  
Ուսուցանել անցդարձուորին թէ ի՞նչպէս  
Բարակ խելքով կարելի է հաստատել  
Սեփ սպիտակ, սպիտակի էլ սեւ լինելն:  
Գոնէ առաւ վճարէին բառերդ,  
Եւ գու խելքդ չծախէլիր անարծաթ:  
Սակայն չէ. հպարտութիւն չունի՞ս դու.  
Գաս ես խօսում ուսի վրայ, ծախելով  
Գիտութիւնդ իւր արժէքով՝ – անարժէք:  
Զես էլ ուզում թէ քեզ կոչեն՝ Վարդապետ:

## ՍՈԿՐՈՏ

Թող անուանուի այդպէս իրան կարծողը:

## ՔՍԱԽՏԻՊ

Ոիրուն բանգործ: Գնա՞ւ, ուսուի եկել ես,  
Գնա՞ դասերիդ: Ճառաբանիր: Կովարած,  
Գնա՞ Պնիքս<sup>5</sup>, ուր քշում են քաղցցուն:  
Գնա էլի՞: Ի՞նչ ես տեղումդ քարացել:  
Գնա խրատի՛ր, որ ցեխիցը հունցըւած,

Մարդն իր խելքում թաքուն ունի մի նուրբ դեւ՝  
Զար և բարու ծագման գաղտնիքն իմացող:  
Գնա՞: Պրծի՛ր:

ՍՈԿՐՈՏ, զուրս զալով ամենայն բաղցրուց  
Բեամբ:

Ահա զնում եմ, Քսանտիպ:

## ՏԵՍԻԼ ԵԲԿՐՈՐԴ

## ՔՍԱԽՏԻՊ

Առ քեզ արաքոց: Գնաց, իրաւ, անվրդով,  
Հաստատաքայլ: Զէ, հաւատա՛, չկարծեմ  
Թէ հաւասար բախտիս զուուի մի կոյր բախտ:  
Հասարակութեանը դիմելով,  
Դուք ի՞նչ կ'ասէք, աթենունիք, այդ բանին:  
Մի ամուսին, ձեռք վեր առած աշխարհից  
Որին ոչինչ զրգուել երբէք կարող չէ,  
Քանի սրախն նա չի առնիլ ոչ մի խոց:  
Ո՞չ, ձեր միջում էրուած սրոովս անսփոփ,  
Որիդ ասես չեմ նախանձում, ով քոյրեր:  
Զեր մարդիկը իմաստուն են, լոելով  
Նոքա սիրուն ձաղկում են ձեր կողերը:  
Հաւատարիմ թէ չէք լինում՝ ծեծում են:  
Կարգն այդպէս է: Բայց յետ նորա ի՞նչ հաճոյք  
Երբ կապում է հաշտութիւնը իւր գօտին,  
Եւ ձեր ո՞րքան իշած սրտին անոյշ է  
Գմբոցից յետ համբոյրների շաղ ուալը:  
Ես եմ միայն որ ձեր միջում հողգոնւխ  
Ոչ մի տեսակ հատուցում չեմ ստանալ:  
Զի չգիտէ իմ արջն ի՞նչ է բարկանալ:  
Ի զուր զոռում զորգոսում եմ մոլեզին.  
Մաղձս թափած պրծած թէ չէ՝ ասում է.

« Լաւ, բան չկայ. մի երակ է երկնքում  
Կ'անցնի կ'երթայ »: Ալակայն չեմ ես ապերախտ.  
Կ'անեմ այնքան, այնքան, այնքան՝ մինչեւ որ  
Ուզէ չուզէ Սոկրատն ինքն էլ կրքոտուի,  
Եթէ անգամ դորա համար պէսք լինի  
Օրերից մին անձամբ վերցնել մի խանձող  
Եւ իմ ձեռքով կրակը տալ իմ տանը:  
Այդ անգամին բոցատոչոր պատի տակ  
Մոնչեն իմ փիլտսոփի թող տեսնեն,  
Իսկ և իմ էլ ցնծութիւնից ճաքճքուելու:

Նկատելով Սոկրատին, որ գալիս է շրջապատռած բարեկամնեւ  
րով, կնիկ մարդիկներով և բարդացիներով,

Ահա: Ինքն է, ետեւիցը քաշ ձգած,  
Ռէխարի պէս, էլ ինչ տեսակ մարդ ասես:  
Վայ գուրք անմիտ անասուններ: Համբերիր.  
Որ ես դոցա զիտութիւնս լաւ ցոյց տամ,  
Նախ կը թողնեմ, որ անկասկած ներս մտնեն.  
Յետոյ կը տեսնեն՝ թէ բարկութեան ինչ կրակ,  
Որ ասուածներն ածած ունին իմ ծոցում,  
Թափելու եմ իրենց գլխին:

## ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ՍՈԿՐԱՏ, ԳՐԱԿԱՆ, ԱՆՏԻՍԹԵՆԵՍ, ՊՐԱՔՏԻԿԱՍ, ԵՒՊՈՒՅԻՆ, ՍԵ-  
ՐԱՍԱ, ԲԱՅԵՍ, ՔԱՂԱՔԱՅԵՆԵՐ ԵՒ ԱԹԵՆԱՅԻ ԿԱՆԱՅԻ:

ՍՈԿՐԱՏ, ներս մանելով ոճնկնդիր և յար-  
գալից բազմութեան միջում:  
Հրամեցէք,  
իմ թանգագին բարեկամներ: Ընդունել  
Զեզ իմ տանս՝ անելիքիս փոքրն է.  
Ցոյց առաջ սեղանը, որի վրայ մի ստրուկ տեղաւորում է զինու  
փարչեր և թասեր:

Ահա զինի, ով ծարաւ է թող խմէ.  
Իսկ թէ մէկը ճշմարտութեան է ծարաւ՝  
Թող ինձ լուէ: Անկեղծութիւնն եմ խօսում:

## ԳՐԱԿԱՆ

Խօսիր այս. այս սեւ ու սուզ օրերում  
Դու ես միայն խաւարի մէջ ճրագը:  
Քեզ լսողը լուսովն օրուայ է գնում  
Եւ զիտուն է: Ես, Գրակէսս, օրինակ,  
Վաղ քան ժամը մոռանալով բոլորը,  
Թէ սէրն ասեմ ու թէ արտըս և այգիս,  
Որին ալիքը ծովային գգվում է,  
Քեզ եմ ուզում, քեզ, Սոկրատէս, տուն ու տեղ  
Թողած այնուեղ և իմ գողարիկ Սիրրինը:

## ՍՈԿՐԱՏ, ԳՐԱԿԱՆԻՆ

Շատ է, ճշմարիտ, այդքան եռանդ, բարեկամ:  
Ալիքնացիներին:  
Բայց մենք քնից զարթեցնենք մեր միտքը:  
Անոխիթենէսին:  
Փոքր ինչ առաջ հարցանողը դու չէիր,  
Անտիսթենէս, թէ մենք, քանի կենդան ենք,  
Միթէ սուզը պիտի կրենք Աթէնքի:

## ԱՆՏԻՍԹԵՆԷՍ

Ապ' ինչ ասեմ: Առիւծի պէս խրոխտալով,  
ի զուր առանք մենք Եզինն ու Սոլիոն, —

## ԵՒՊՈՒՅԻՆ

Աւերեցինք Արգովիուը, —  
ԳՐԱԿԱՆ  
Եւ սուրբ դատը

Պաշտպանելով հալածեցինք թշնամին  
Զակինթոսի ջրերի մէջ:

ԵԿՊՈԼԻՍ

Կոփւ երէկ,

Դաշտձեղլ կոփւ մենք կ'ունենանք էգուց էլ:

ԱՆՏԻՍԹԵՆԵՍ

Յաղթողը մենք դափնեպսակ ճակատով,  
Ալբիդամոսն է մեզ բռնում իւր ճանկում, —

ԳՐԱԿԱՆ

Եւ ժանտախոր նաեւ տեսանք Աթէնքում:

ԱՆՏԻՍԹԵՆԵՍ

Էլ ժամանակ է անպանոյց ապրելու:

ԵԿՊՈԼԻՍ

Բախտաւորին օրէսիդէն կերն ու խում, —

ԳՐԱԿԱՆ

Խաղն ու երգը:

ԱՆՏԻՍԹԵՆԵՍ

Ոսկեբանուածք զարդերը, —

ԵԿՊՈԼԻՍ

Արուեստներն, որով փառք ենք վաստակել, —

ԳՐԱԿԱՆ

Եւ բարձրութիւն՝ ճախարակել փղոսկրից  
Կերպարանքներ:

ԱՆՏԻՍԹԵՆԵՍ

Եւ քնա՞րը:

ՍՈԿՐԱՏ, ՀԵՂՆԵԼՈՎ

ԱՇԴ է ձեր

Հանճարն:

Պրաքուիասին

Իսկ դու, Պրաքսիաս, ի՞նչ կ'ասես:

ՊՐԱՔՍԻԱՍ

Ես այն կ'ասեմ, որ մեզանում օրէնք է  
Բանաստեղծի ոգիովը արքեցած՝  
Գիւցազուններ լինել, ուստի չըրջենք  
Ամբրոսական անօթն<sup>6</sup>, որից իւր ծարաւն  
Հանգցնում է աթենական հանճարը:  
Մենք զօրական, արուեստին էլ միտ դնենք:

ՍՈԿՐԱՏ

Լաւ ես խօսում, արձանագործ, այլապէս  
Կը ծիծաղէր, բարեկամներ, մեր վրայ  
Չարքաշ Սպարտան<sup>7</sup>, թէ մենք իւր պէս շաժուէինք  
Թէ դուք մի օր, Աթենացիք, դուք խելքը,  
Ազնըրութիւնն և զկծող առողջ միտքն,  
Եւ չնորհքը զեղածիծաղ, բանաստեղծ  
Ու արձանակոփ, ամէն ինչում վարպետ, դուք՝  
Որոնց երգով չն են մայրին և պուրակ,  
Դուք իւր աչքին երեւայիք անարուեստ  
Հագուստներով՝ ճաշակելով խեղճ թանը:  
Ինչ էլ լինի վիճակը մեր, յաղթութիւն  
Թէ պարտութիւն, մեր երգերը, տօները,  
Տարազները պարտագունք մենք նորան.  
Դու, Պրաքսիաս, աստուածներդ լուսագոյն,

Եւ դու թատրդ զուարթածիծաղ, Եւալիս.  
 Խոկ դուք ձեր զարդն ու պատմուման, ով կանայք:  
 Եւ զի մենք միշտ այս ձիրքերով ենք փայլել,  
 Թող չ'արգելենք Շնորհիք մեր մէջ ծաղկելը:  
 Լինենք զուարթ և գիտենանք լաւ մնոնել:  
 Աթենացի լինենք: Եթէ մէկն ենէ  
 Փնընելու Սալամինի քաջերի  
 Որդիներին, թող մնանում ճանաչէ  
 Այն մարդոցը, որ գերիվեր զօրացան:  
 Երբ թշնամին ասպատակը սփուելով  
 Կոխում էր մեր ճանապարհներ, և տիսուր  
 Եխն ինքեանք աստուածներն էլ, ով մեզնից  
 Եր քաջապէս մնուանողը: Արուեստգէտն:  
 Եւ շատն ընկան հրացայտ աչքով պատանիք,  
 Որոնց ճակատն համբուրել էր մի Սուսա:  
 Այն ժամանակ, որ Գոերքսէսը, յիմարած  
 Փքուն փառքովն, արձակում էր Ատտիկէ  
 Միլիօնաւոր պատերազմող, ու Ասիան  
 Մոլեգնութեամբ ողողում էր մեր դաշտեր,  
 Բանաստեղծն անոյշ երգով, նկարիչն  
 Ու արձանակոփ, ով Աթենաս, զիտացին  
 Քաջիկ կոռուլ քաղքիդ համար. և ի՞նչ էր,  
 Ո՞չ զինաւոր հաւատարիմ այն Եսքիլի<sup>9</sup>,  
 Որի քարը, իւր բաղանքին համաձայն,  
 Լոկ մէկ բառ է միայն ասում, զի շատ լաւ  
 Նրան ճանաչեց զիսակաւոր Մեղացին<sup>10</sup>:  
 Ո՞չ, կախների խառնուրդի մէջ մինչ անգամ  
 Մենք միտ բերենք հրաշակերտ Պրօպիլէսոն<sup>10</sup>,  
 Ու աչքի առջեւ պերճապայծառ ուաճարներն,  
 Ուր Փիդիս, փառաթաթախ, բազմեցրեց  
 Աստուածները: Այս, այս, բարեկամներ,  
 Որպէսզի յաղթութիւնը հեշտանայ,  
 Պէտք է, և այդ անկ է որդւոց թեսեւոի,  
 Անել այժմ էլ, որպէս մինչեւ օրըս էլ:

Սովորկ կենդան, կենդան է և Եւրիպիդ,  
 Եւ Եսքիլեան զափնով գլուխնին ճոխապանծ:  
 Ո՞ն ուրեմն թատրօն երթանք ուսնելու.  
 Թող ասեն մեզ բանաստեղծներն թէ ինչպէս  
 Զախորդութեան ծոցում մեծցած մի երկրում  
 Վսեմ գործեր վսեմ տաղերից են ծնվում:  
 Լինենք այնպէս, որ երբ յանկարծ օրհասը  
 Գայ մեզանից Ալկամէնին խելու  
 Լամ պատանի Եւրիպիդին, շատ իսկ մնծ  
 Քաղաքացու մասին խօսուած թող լինի,  
 Աթ են ա ց ի՝ է՝ գրելով իւր համար:  
 Աստուածները, որոնց կրթովն եմ խօսում,  
 Մեզ են նայում Ակրօպօլի բարձունքից:  
 Ուստի գործի գուք ողջ՝ վրձին, քնար, գուր,  
 Եւ՝ որ մանում ես ծիրանի թեմ՝ իլիկ:  
 Յանենք ցորեն, ծալիկն ու ծառ մեծցնենք,  
 Կիսաստուածներն երգենք հսկայ, տաշենք կումն,  
 Եւ անպանոյն ոգին պահենք անցելոց.  
 Զի, լինելով ամենամնծ, կը լինենք  
 Հզօրելըն և այդպիսով անվրէս  
 Մենք աշխարհներ կը զրաւենք:

## ԱՄԵՆՆՑԻՆ

Ուղիղ է:

Կեցցէ Սոկրատ:

## ՍՈԿՐՈՏ

Կեցցէ Աթէնք  
 Բարձրացնելով իւր լիւ թառ  
 Խմենք արդ:  
 Մեզ օգնութիւն առողջ մոռի կանչենք լոյսն  
 Որ վանում է մոլորութիւնն, ինչպէս որ

Փայլառակն ամպը լուծում և մութը  
Փարառում է:

ՊՐԱԲՍԻԱՍ, բարձրացնելով իւր թասը,  
Խմենք:

ՄԵԼԻՍՏԱՆ նոյնոքս

Սոկրատի կենացը:

Այն բազին, որ Վարդապետի բուլոր ունկնդիրները ձայնա-  
կցում են Մելիստային և չի ացմամբ զովարանում են նորան (Սոկ-  
րատին), մտնում է Քսանտիպ սպառնալից և մոլեզին:

Ա. Հ. Հ.

## ՏԵՍԻԼ ԶՈՐՅՈՐԴԻ

ՍՈՒՐԱՏ, ԱՆՏԻՍԹԵՆԵՍ, ՊՐԱԲՍԻԱՍ, ԵԽՈՎՈԼԱՍ, ԳՐԱԿԵՍ, ՄԵԼԻ-  
ՏԱՆ, ԲԱՅԻՍ, ՔՍԱՆՏԻՊ, ՔԱՂԱՔԱՅԻՔ ԵՒ ԱԹԵՆԱՅԻ ԿԱՆԱՅԻ:

ՔՍԱՆՏԻՊ

Խոկ Քսանտիպին: Հրաւիրում չէ՞ք նորան:

ԱՆՏԻՍԹԵՆԵՍ

Բարի Քսանտիպ, խմիր մեզ հետ այս թասը:

ՔՍԱՆՏԻՊ

Եւ ինչի՞ ոչ զայլերի հետ անտառի:  
Ի՞նչ էք բերում այստեղ: Ցորի՞ն, գինի՞, թուղ:  
Ոչ, որ ասես, ամենեւին ոչ մի բան:  
Առնելն հեշտ է: Դուրս այստեղից, դուք, անպէտք  
Կորնթացի չներ, անգործ, վայրահաջ:

ՍՈՒՐԱՏ

Ա. Հ. Հ. կնի՞կ:

ՔՍԱՆՏԻՊ

Դուրս այստեղից:

Մէկս միտսի ետեւից օղում թոցնելով զի-  
նու փարչերը, գաւաթները:

Ահա ձեզ

Գինու փարչեր: Ա. Հ. էս էլ ձեզ գաւաթներ.

Կործանելով սեղանը:

Ահա, ահա:

ԲԱՅԻՍ

Մեղանն ահա կործանուած:

ՔՍԱՆՏԻՊ

Մեղանն իմն է: Ո՞վ կը կապէ իմ լեզուն,  
Շողարորթներ. դու էլ գնձուոտ բանարար,  
Փիլիսոփիայք, վայրախօսներ, դուրս տանից:

ՄԵԼԻՏԱՆ

Ի՞նչ մոլեզին աղաղակներ:

ԵԽՈՎՈԼԱՍ

ԵՐԿԻՆԸ

Հետքի վրայ թուկուում է:

ԳՐԱԿԵՍ

Օ՞ն, ԵՐԺՄՆԱՔ:

ՊՐԱԲՍԻԱՍ

Թրակացի զինաւորի ծիծաղկու  
Դէմքըն ունի:

ԱՆՏԻՍԹԵՆԵՍ



ԲԱՐԵՒ

Դա հրաշք,

Մարաթօնում, կը գործէր հա՛:

ԵԿՊՈԼԻՍ

Հիմա ես

Հասկանում եմ, թէ թագաւորն Արամազդ  
Խնչի՞ բարձրում մշուշապատ երկնքի,  
Կորա ոտից քաշ անելով գարբնի սալն,  
Կախ է արել իւր քաջասիրս կնոջը<sup>11</sup>:

ԴՐԱԿԵՍ

Դէ՛, երթանք շուռ:

ԲԱՐԵՒ

Յաեսութիւն, Սոկրատէս:

ՊՐԱՔՏԻԱՆ

Աստուածները թող պահեն քեզ:

ՍՈԿՐԱՏ

Ես այստեղ

Ունեցածիս ամենալաւը ձեզի,  
Բարեկամներ, նուիրում եմ բովանդակ:  
Ընտիր զինիս, ճշմարտութիւն գերագոյն,  
Յօժար սրտով պյու ամէնը տուի ձեզ,  
Եւ վասնզի այստեղ ոչինչ չէ փոխուած,  
Չեզ հիւրընկալ ահաւասիկ կինըս էլ:  
Սա իսկապէս շատ է բարի, եկէք շուտ.  
Որպէս երկինք մէկ ժպտում է, մէկ լալիս,  
Կը մեղմի սա, կարճ է լինում մրրիկն,  
Եւ մէնք էլի թելը կը կցենք մեր խօսքի.  
Եկէք, բարեկամներ:

ՔՍԱԽՏԻՊ, ՀՐԵԼՈՎ ու զուրս մղելով

Սոկրատի բարեկամներին

Գնացէք, իւր բարեկամներ:

Գուրս այստեղից, չարի վիժմունք: Գուր, նախիր՝

Ծնունդ ախտի, կարուութեան, որ երբէք

Ասում չես «Ո՛չ» երբ սա ասում է «Ուո՞»:

Կորէք գնացէք: Գուրս այստեղից, գուրս,

Փատուաւորներ:

Փիլիսոփային լուղները բուրո՞ն էլ Քսանտիպից վճառուած՝ զուրս  
են զնում: Սոկրատ առաջնորդում է նոցա և հետները զնում:

## ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՔՍԱԽՏԻՊ, յետոյ ՄԵՐՐԻՆ

ՔՍԱԽՏԻՊ, ընկճուած:

Աչքս լիքն է արկիցունքով:

Ամենեւին չնեղացաւ: Քար է, քար:

Ա՛մ ունայն է աշխատանքս և ի զուր

Ես է զալիս ու բորբոքում արիւնս:

Էլ լինչ փորձեմ, էլ լինչ անեմ, չգիտեմ:

Սպառեցի, սպառեցի հնարներս:

Նկատելով Միրրինին:

Ո՞վ կը լինի այն գեղեցիկ կինն արդեօք,

Որ զալիս է մեր տունը:

ՄԵՐՐԻՆ

ՔՍԱԽՏԻՊ, ողջոյն:

Միրրին է իմ անունը. ուզում եմ

Սոկրատէսին մէկ տեսնել:

ՔՍԱԽՏԻՊ

Հա՞ ուզում ես:

Ես ուզում չեմ: Խարտեաշ մազով գեղեցիկ,  
Սոկրատէսը տանը չէ:

Միրրին ուզում է խօսել: Քսանտիպ չի թողնում:  
Լաւ:

Միրրին

Բայց . . .

ՔՍԱՆՏԻՊ

Լաւ է,

Ասում եմ քեզ: Ծաղիկ բերանդ փակիր:

Միրրին

Պէտք է . . .

ՔՍԱՆՏԻՊ

Ոչինչ պէտք չէ: Ես, Միրրին,  
Ճանաչում եմ և քեզ և որ քեզ պէս են:  
Դու էլ, ասա, միւսների պէս եկել ես  
Նեկտարի հետ մեղքը խառնած տալ նորան,  
Կեղծուպատիր գովասա՞նքը: Շատ ապրիս:  
Պըսակուելու չէ՝ իմ մարդը, իմացիր:

Միրրին

Ե՞ս, Սոկրատին շղաքորթե՞մ: Եկել եմ  
Նրան լաւ ներկեմ:

ՔՍԱՆՏԻՊ, իսկոյն փափկացած:

Այդ ուրիշ բան:

Միրրին

ԿԵՐՍԻԳՄ

Կատաղութեամբ լիքն եմ:

ՔՍԱՆՏԻՊ  
Միթէ. ի՞նչ բան կայ,  
Ասա մէկ ինձ, բարի Միրրին: Լաւ ներկել:  
Սոկրատ տանն է: Նորան տեսնել կարող ես:

Միրրին

Նրա երեսից մարդս իմ գրկից փախած է:  
Այո՛, մարդըս, Անազիրցի Գրակէսը:

ՔՍԱՆՏԻՊ  
Կարծեմ սիրուն մի տղամարդ

Միրրին

գեղեցիկ,  
Համբերատար, աշխատասէր և մարմնով  
Մի չերքիւլէս, որ գորովու խնամքով  
Գիտէր առաջ հաճոյանալ իր կնկան  
Եւ դաշտերը իւր մշակել: Իսկ հիմա  
Ուզք ու միւտք փիլիսոփայ գառնալ է:

ՔՍԱՆՏԻՊ  
Եւ անխնամ թողնում է դաշտն, այնպէս չէ:

Միրրին

Եւ կնոջն էլ:

ՔՍԱՆՏԻՊ  
Խեղճուկ Միրրին: Դեռ ոչինչ  
Եթէ գոնէ տգեղ լինէր Դրակէս

Միրրին

Մի օր լսեց նա Սոկրատին խօսելիս  
Անմահութեան մասին՝ Կեփսի<sup>12</sup> դափնեաց տակ:

Եւ այդ գերեց, բազմութեան մէջ, Դրակէսին:

ՔԱԱԱՏԻՊ

Միւսների պէս: Ե՞ն. մարդ ասածդ էլ չկայ:

ՄԻՐՐԻՆ

Այն օրից հա՛, հետեւում է նա շան պէս  
Սոկրատէսին: Առաւոտից, Պէկլուր<sup>13</sup>,  
Խապէրի տակ գուք կը տնանէք ապուշիս  
Նորա եսքից թափառելիս: Եւ սակայն  
Ժառանգութիւնն ուր ծաղկում է իւր այգին,  
Իւր բանջարնոց. իւր պարտիզակ . . .

ՔԱԱԱՏԻՊ

Եւ իւր կին . . .

ՄԻՐՐԻՆ

Ողջ կորչում են: Այս, Դրակէս – իմ մարդը –  
Ինձ թողել է, անվայել բան միթէ չէ:

ՔԱԱԱՏԻՊ

Եւ կ'ուզէիր որ նա գառնայ իւր այգին:

ՄԻՐՐԻՆ

Բայց կը տեսնեմ Սոկրատէսին: Ասում են  
Կատակող է, աւելի լաւ: Ես ողջը  
Կ'ասեմ նորան ինչ կայ չկայ սրտում:

ՔԱԱԱՏԻՊ

Շամ գեղեցիկ:

ՄԻՐՐԻՆ

Կը լոէ իմ գանգատը:

ՔԱԱԱՏԻՊ

Աքանչելի՛, քոյր իմ Միրրին:

ՄԻՐՐԻՆ

Թող սուս խուլ

Զձեւանայ: Թէ կարծում է իւր սիրու  
Ես պասբերան պիտի նստիմ, սխալ է:

ՔԱԱԱՏԻՊ

Այս, Միրրին, աչքը կոխիր սխալը:

ՄԻՐՐԻՆ

Կա գրաւում է լոկ խօսբերով, որից ես  
Շատ աւելի լաւը ունիմ, գիտենայ:

ՔԱԱԱՏԻՊ

Գնա՛ փոթորիկ, բուք ու բորան բեր գլխին.  
Համաձայն եմ, Ես, Քանոտիպս, որից նա  
Փախս է տալիս, որ ինչ է թէ կարենայ,  
Ոչ անձրեւին և ոչ քամուն նայելով,  
Խելացնոր, գատարկամէջ բատերով  
Ճառեր ասել Մունիքիոյ<sup>14</sup> ամբոխին  
Կամ ֆալէրի նաւակայքի մարդոցը:  
Չթուլանաս: Եւ երբ մի լաւ տաքանայ,  
Ինձ էլ, հոգիս, կանչիր, մի լաւ ծիծաղինք:  
Մարդիկ նուազ կը լինէին մեծախօս,  
Եթէ սանձը, հաւառա ինձ, արորէր  
Նոցա գունչը: Ահա Սոկրատ զալիս է:  
Դէ քեզ տեսնեմ հիմա, Միրրին: Վրա ընկիր  
Անվախ, արձակ, զարկ ատամդ, պատափիր:  
Տուն է մանում.

## ՏԵՍԻԼ ՎԵՅԵՐՈՐԴ

ՄԻՐՐԻՆ, ՍՈԿՐԱՏ :

ՄԻՐՐԻՆ

ՅԵՄ ՊԱՐՃՐՈՒ ՄԱՐԴՍ, ՍՈԿՐԱՏ :

ՍՈԿՐԱՏ

ՄԱՐԴԴ ՌՎ Է.

ԴՐԱԿԵՇՍ :

ՄԻՐՐԻՆ

ԱՅՇ

ՍՈԿՐԱՏ

ԳՈՒՇ ՆՈՐԱՆ ԱՎԱՏԱՀՄԱԲ

ԿՈՐԳՐԵԼ ԵՍ, ԻՆՉԱՊԷՍ ՄԵԿԸ ԿԱՐԳՆՈՒՄ Է

ՔԱՐ ԽԱՆԳԱԳԻՆ ԿԱՄ ԹԷ ԳՐԱՄ ՈՎԿԵԼՀՆ :

ԱՍՎ, Այդպէ՞ս է բանը :

ՄԻՐՐԻՆ

Ո՛Յ, Այդպէս չէ.

ՆՈՐԱՆ ԳՈՒ ԵՍ ԽԵԼ ԻՆՃՆԻՑ: ՆԱ ՔԵՇ է

ՅԻՄԱՐԱԿԱՆ ՅՈՅՍԵՐՈՎ լի հետեւում,

ԱՀՔԻԴ ԿԱՐՈՒ, ԽՈՎՔԻԴ ծարաւ, ունկնդիր.

ԱՆՅԱԳ ՄԵՆՅՈՎ քո խորամանկ ճառերին,

Եւ եսքից իլիսոսի<sup>15</sup> ափերում

Թափառելով՝ իմաստութիւն ուսնելու:

ՅԻՄԱՐՈՒԹԻՒՆ:

ՍՈԿՐԱՏ

ՄԻՐՐԻՆ, քեզնում ԴՐԱԿԵՍ

ԳԵՂԵՇԿՈՒԹԻՒՆՆ ԱՍՏՈՒԱԺԱՅԻՆ Է ԳԹՆՈՒՄ,  
Մազեր կարթամ, ծաղկաժպիտ շրթունքներ . . .

ՄԻՐՐԻՆ

Է՛Լ Ի՞նչ ապա նա փնտում է ուրիշ տեղ:

ՍՈԿՐԱՏ

ԽԵԼՔ, որ լրջմիտ կամ թէ թեթեւ զրոյցով  
Գերէ նորան իւր հրեղէն վարմի մէջ:  
Միւսք, մեծաթեւ արծուի նման զայրացած  
Սւանալով դէպ արգարն ու ճշմարիտ:  
Թէ ուզում ես նորան բռնել Քեզ մօտ, կբ՛ն,  
Ինչու նորան ցոյց չես տալիս խելքդ, հոգիու:

ՄԻՐՐԻՆ, զարմացած:

Ի՞նչ ասացի՞ր:

ՍՈԿՐԱՏ

Արեգակով բլուսն հասած ողկոյզներ  
Համեղ խորտիկ և Առտիկեան<sup>16</sup> թուրքը,  
Գինին, զուարթ մարզպարէութիւն մնջ տուող,  
Զմայլած մարդուն թանգ համարուած այդ զանձեր  
Է՛լ գին չունին, միանգամ որ կուշտ է նա,  
Եւ տեսնում ենք ողջ աշխարհում նոյն բանը.  
Այդ ժամանակ միաքն է ինդրում իւր սնունդ:

ՄԻՐՐԻՆ

Բայց . . .

ՍՈԿՐԱՏ

Երբ որ նա քեզի առաւ, դեռ աղջիկ  
Լիափթիթ, այնպէս չէ՞ որ Դրակէս  
Տանն էր մնում, գոնէ այդպէս եմ լսել:  
Հաւատա՞մ. ի՞նչ:

## ՄԻՐՐԻՆ

Խ'ոկ է, մնում էր նա տանը:

## ՍՈՒՐԱՏ

ԱՆԹՐՈՊՈԼԻՑ:

## ՄԻՐՐԻՆ

Ուրախութեամբ:

## ՍՈՒՐԱՏ

ի՞նչ ուրեմն

Նա անում էր տանը, Միրրին:

## ՄԻՐՐԻՆ

ինձ նայում

Հիանում էր. «Ո՞վ, զոչում էր, մազեր խիտ,  
թանձր անտառիցն աւելի խիտ, շող ոսկի,  
Գոյն վարդենի, ճերմակութիւն արժանի  
Աստուածուհու, ձեզ եմ ուզում անդադար  
Զննել, դուք, ով գեղեցկութիւնք, ուր երկինք  
Խւր ցոլմունքն աստուածային գրել է»:  
Այդպէս, Սոկրատ, նա 'յն ժամանակ խօսում էր,  
Զի իմ Դրակէսն ըմբուտ չէր այն ժամանակ:

## ՍՈՒՐԱՏ

Խոկ ի՞նչ էիր անում դժու

## ՄԻՐՐԻՆ

Ե՞ս: Գեղեցիկ

Լինելու տալիս էի ուշք ու միտքս:

## ՍՈՒՐԱՏ

Ա՞:

## ՄԻՐՐԻՆ

Որ նորան հանոյանամ, որ նորա  
Սրոյինն անեմ՝ անուշահու ջրերով  
Մազերս էի ես ողողում ժամերով,  
Հովից թրթող նորք լաթերով զարդարվում:

## ՍՈՒՐԱՏ

Բարի: Սակայն, երբ ծնկանդ վրայ այդպէս  
Դրակէս երկար զմայլվում էր քո անձով,  
Գու ի՞նչ էիր նորան ասում:

## ՄԻՐՐԻՆ, պարզմառթեամբ:

Եւ ոչ ի՞նչ:

## ՍՈՒՐԱՏ

Եւ ոչ ի՞նչ: Այդ շատ քիչ է:

## ՄԻՐՐԻՆ

Բայց յետոյ,  
Երբ Դրակէս, որ ինձանից փախչում է  
ինձ մոռանում, քեզ էր արգէն հետեւում,  
Լի իւր տիսուր ցնորքներով, նա յաճախ  
Քո ճառերը կամենում էր կրկնել ինձ,  
Ես այս էի նորան ասում. «Բարեկամ,  
Շոյտ են սահում ժամն ու օրը: Ինչո՞ւ են  
Այդ ընդունայն զրոյցները: Եթէ ես  
Գեղեցիկ եմ, էլ ի՞նչ են պէտք բառերը»:  
Ուղիղ չէի:

## ՍՈՒՐԱՏ

Այս, Գուցէ: Միայն թէ  
Զիօսելով, պատահում է որ իրար  
Մարգիկ ծուռ են հասկանում: Ո՞վ Միրրին,  
Կիպրում, կզզի ծաղկազարդար,

Իւր արձանին մի արձանագործ սիրահար.  
 Բաղդով մի օր, Ալտղիկ մօտովս անցնելիս,  
 Գալատէա<sup>17</sup> չնչաւորուած խօսում է:  
 ԶՔր եղել այդ, կը լքանէր նորան շուռ  
 Պիզմալիօն: Պատմուածանդ երփներանգ  
 Աչազրաւ է. բայց պարտիզաց – վարդերը  
 Մարդիկ իրանց կ'առնէին կին, թէ վարդերն  
 Իրենց գէստ մեզ քամահրանքը մոռնալով,  
 Բաց անէին՝ յափշուակելու համար մեզ՝  
 Իրենց օծեալ պսակները և մեզ հետ  
 Խօսակցէին՝ իրենց բոյրը տալուց յետ:  
 Դու որ, ստկայն, թովել կարող ես ձայնովդ  
 Նման թափառ, մայրու խորքում, Սոխակին,  
 Ասում էիր. «Ի՞նչ փոյթ, Դրակէս խեղճ մարդ է,  
 Հուժկու, բայց պարզ: Թող միայն նա աչքերիս  
 Աստղերի պէս բոցավառուելը տեսնէ,  
 Եւ արեւի խաղալն ոսկի վարսիս մէջ,  
 Այն ինքնամոռ սրտին այդքանն էլ հերիք»:  
 Բայց չէ. գարձեալ նա մի բանի ունի պէտք:  
 Տեսնել կ'ուզնին այնքան երկար խուփ աչքերն,  
 Գիտենալ որն է պարտիք կանոնը,  
 Ինչո՞ւ է մահն, ինչո՞ւ համար մեր կեանքը.  
 Ես էլ, որ իւր անշէջ ծարաւն հանգնեմ,  
 Յոյց եմ տալիս, Դից ինչոյքում բազմական,  
 Մարդըն ազատ, ազատ բախտին գործաւոր:  
 Համոզուղական բաղդրութեամբ:

## ՄԻՐՐԱՅ

Հասկացայ քեզ:

## ՍՈՎՐԱՏ

Ինձնից ուսաւ Դրակէս,

Ի՞նչո՞ւ հոգին գէստ գեղեցիկը ուժգին  
 Ամբառնում է և ընտանի և լու  
 Կացուցանում լաւութիւնը նա իրան:  
 Հիմա, Միրրին, աշակերտուիր գու նորան:  
 Թէ անսպառ ծորաններից խմելով՝  
 Նա քաղցրութիւնն համբոյրների քեզ ուսոյց,  
 Կ'ուսուցանէ հպարտութիւնը ազնիւ,  
 Սուրբ խնդութիւնն՝ ըմբռնելու, գրկելու  
 Ճշմարտութիւնն որպէս աւար, և զգալու  
 Տարակոյսի փարատուելը անձիդ մէջ:  
 Իւր հետ ապրիր, իւր հետ փնտուիր, իւր հետ մոռածիր:  
 Ստանալով ինձնից նա սերմն անմեռիչ,  
 Փոխազըրել պարտաւոր է, և այժմ  
 Ակում է իւր վաստակը: Ուրեմն,  
 Դու, ով Միրրին, խուլ վայրապար զրոյցին,  
 Հող արգաւանդ եղիր, որով պիտ' անցնի  
 Մերմանահան՝ բուռը լիքը ցորենով,  
 Եւ ձեր երկուից գաղափարի կը ծնուի հունձն.  
 Այդ է, Միրրին, ամուսնութիւնն իսկական:  
 Եւ երբ մշակը մերձենայ ձեռքը բարձր,  
 Դու ցնծութեամբ լոիր ձայնը իւր ոտքի:  
 Մի՛ խրտեցներ թէ մութիմութ կը զայ նա,  
 Եւ զգնջ որ, լաւ լաւ զանձովը բեռնուած,  
 Նա ծոխութիւնն ու կեանքն այլուր չտանի:  
 Կարող ես, չց: Լոկ մարմինը զարդարել  
 Բարբարոսի է բան. ուստի, որպէս զի  
 Ամուսինդ քեզի միայն հետեւի,  
 Հոգիդ նոյնպէս տես զարդարես, այնժամ նա  
 Քեզ կը լսէ:

## ՄԻՐՐԻՆ

Ի'սկն ես ասում, ի'սկը՝ դու:  
 Զգում եմ այդ, տեսնում եմ այդ: Քո չնորհիւ  
 Հասկանում եմ, գէպի լաւը փոխուած, որ

Գեղեցկութիւնն արտաքինում չէ միայն.  
Եւ այն որ նա, իւր ձանձրութեան բոլոքում,  
Որոնում է քո ետեւից ման գալով,  
Այն այսու հետ Գրակէս տանը կը գտնի:  
Թող օրհնեն քեզ աստուածները ինձ լսող,  
Քեզ, որ ինձի, ով պատուական ուսուցիչ,  
Իմ գնալիք ճանապարհը ցոյց տուիր:

Այդ ժայրկենին ահանգում է Քսանափալը ճեմելիքում:

## ՏԵՍԻԼ ԵԹԹՆԵՐՈՐԴ

ՄԻՐՐԻՆ, ՍՈԿՐԱՏ, ՔՍԱՆՏԻՊ, (Նախ պահուած)

ՔՍԱՆՏԻՊ, առանձին:

Ի՞նչ շատ երկար են խօսում. ի՞նչ են ասում,  
Մէկ լսենք.

ՄԻՐՐԻՆ, ՍՈՂԹԱԹԻՆ:

Հիմի արդին էլ գիտեմ,  
Ե՛ս կը յաղթեմ: Բանն աչքումս հեշտացաւ:

ՍՈԿՐԱՏ, բարութեամբ:

Գնա հիմա:

Միրրինը գուրս գնալու է լինում. բայց նորից յետ է դառնում  
Սողթաթի մօմ՝ հիացման և երախտագիտութեան բուն շարժում:

ՄԻՐՐԻՆ

Ո՛վ պատուական իմաստուն.

Թող համբուրեմ:

Կատ առնում է ձեւների մէջ Սողթաթի զլուխը և դրոշմում է ճառ  
կատի և այտերի վրայ լսոշոր կոկուծ համբոյրներ: Կոյն այդ վայր  
կենին նորս է մտնում. Քսանտիպ և վազում է դէպի Միրրին մոլես  
զին կատաղութեամբ:

ՔՍԱՆՏԻՊ

Բարի ախորժ, այ Միրրին:

ՄԻՐՐԻՆ, յանկարծ բանուած:

Ահ, Քսանտիպ:

ՔՍԱՆՏԻՊ

Միրրին բան: Ե՛ս եմ, հա:  
Ճրագ բանողդ լինեմ: Այ անպիտան,  
Այ խաբեբայ, այ աւազակ, այ շուն, գող,  
Գալիս էիր լաւ ներկելու Սոկրատին,  
Մարդիդ համար բուք ու բորան անելու:

ՄԻՐՐԻՆ

Ես սորան ասում էի . . .

ՔՍԱՆՏԻՊ

Շատ ապրիս,  
Լաւ լսեցի: Ծնորած կերպդ շատ լաւն է:  
Եկել էիր ցուլդ այսուեղ փնտուելու,  
Քո սիրելի Դրակէսին, քո մարդուն:  
Այ, լուչքան, կանանց սրտեր, տգեղ էք:  
Իմին էիր աչքդ տնկել: Խմացայ,  
Քեզ երկուսը, քեզ չորսն է պէտք թերեւս:  
Ծնողնելով Միրրինի ճայնն և բայլես:  
Եկել եմ լաւ ներկեմ նորան:

Իւր բնական կերպն առնելով:

Քո միւրին էք

Նրան թակել, տունը զլխին խոռվել:  
Ա՛, Հեկատէի<sup>19</sup> անունը, լաւ կոներով ես թակում:  
Շատ զուրեկան, շատ անուշիկ է թակդ:  
Իսկ զու արի իմ տան կերպը հիմի տես:

Քսանտիպն ուզում է Միրրինի վրայ զահավիժուել: Սողթաթ կը  
նոշ դէմն է ընկնում, անում է նորան թեւերի մէջ և պինդ ըըն  
նում:

ՍՈԿՐԱՏ, ՔԱՅԱԿԻԱԲԻՆ բանաձ:  
 կաց, հանդարտուիր, այ իմ կնիկ:  
 ՔՍԱԽՏԻՊ, զոր փորձելով պոկ զալ:  
 Թող ինձ մէկ,  
 ՓԻԼԻՍՈՓԻՋ: Սորա համար է դողում,  
 Եւ վասն զի իմաստութիւն է փնտոածն,  
 Շատ իւր բանին յարմար կը գար այս ձողը:  
 Ինձ տուր գրան: Մէկ հեղ զոնէ թող տեսնեն,  
 Որ վերջապէս բարձը ձաղկին է տփում:  
 ԱՅՐԻԲԻՆ, վախվելով:  
 Եթէ ճակատը Սոկրատի պազեցի . . .  
 ՔՍԱԽՏԻՊ

ՀԷՆց իր բերնով է մեղքն ասում: Դորա մօտ  
 Լպրշութիւնն անզուսպ է: Ուրեմն  
 Գգվում էիր, նման լեղի ալքին,  
 Ծովաժայոից էլ շատ մերկ այդ ճակատը:  
 Ես լաւ տեսայ: Նոյնեւնման ծովահարսին,  
 Որին Պայը<sup>20</sup> զուարճացնում է խալով,  
 Պաչում էիր գու այս տափակ զլուխը:  
 Ծաղրող, ճաղառ, աչքն երկնքումը թափառ,  
 Ի՞ն է, բաւ է: Դու նրան ինձնից խլում ես:  
 Քո շրթունքից մեղր ծորող բառերը  
 Զեն գրգոռում բաղձի տապը սորանում.  
 Զուր ես տալիս մազերդ շաղ իւր վրայ,  
 Այդ չի օգնում. և, վասն զի ուզում ես  
 Հլու Սէրը հետքիդ վրայ գայ հասնի,  
 Երբ տեսնում ես, որ խօսքերը հերիք չեն,  
 Նրան համբուրել սկսում ես: Զուարթ էիր.  
 Այժմ, սիրուն, լաց լինելունն է հերթը,  
 Զի ճանկել այլանդակել պիտիմ քեզ,  
 Այդ աղաւու աչքդ փորել ու փակել:

ՔԱՅԱԿԻԱԲ պոկ է զալիս և սպանալից կոռւփներով զնում է  
 ՄԵՐՐԻՆԻ վրայ բնկնելու:

ԱՅՐԻԲԻՆ, յետ բաշուելով սարսափած:  
 Ո՛չ, ՔԱՅԱԿԻԱԲ. Վախում եմ:

Սոկրատ նորից ընում է ՔԱՅԱԿԻԱԲԻՆ և նորից կաշկանդում իւր  
 բազուկների մէջ:

ՍՈԿՐԱՏ, ՄԵՐՐԻՆԻ:  
 Մի՛ վախենար:

Պինդ եմ բռնել:

ՔՍԱԽՏԻՊ, կամենալով զուրս պըծնել:  
 Սոկրատ, թո՞ղ ինձ: Ինչ. մի՞թէ  
 Նորան կծել պիտ՝ չկարենամ:

ՍՈԿՐԱՏ, հանդարտութեամբ:

Ո՛չ:

ՔՍԱԽՏԻՊ  
 Թող ինձ  
 Մի քայլ անեմ, բարեկամ:

ՍՈԿՐԱՏ

Ո՛չ, հաւատա:

ՔՍԱԽՏԻՊ, նայելով ՄԵՐՐԻՆԻ կրա-  
 կուած աչքերով:  
 Գէթ իմ հերթում ես էլ նորան համբուրեմ:  
 Ա՛հ. տեսէք անարժանին, կռանալիս,  
 Իւր կարապի զզովը: Ուրեկ  
 Կամենում եմ ես այդ վեզը կախարդիչ:

ՍՈԿՐԱՏ

Եեզի լսիր, ՔԱՅԱԿԻԱԲ:

## ՔՍԱՆՏԻՊ

ՈՇ, ԵԽ ՆՈՐԱՆ ԻՄ ԱռջԵԼ,

Այստեղ ահա չոգեցնել ուզում եմ.

Երկու ձեռքս կոխել փարթամ մազերի

Այդ շիկագոյն ոսկու մէջը, և փետել

Կնդացնել նորան այնքան, որքան չէ

Իւր սիրեկանն, այն գեղեցիկ Սոկրատը:

Անհարին զայրացած և վերջին ճիզվ թափելով:

ԱՇ ասութած: Ի՞նչ եԽ բռնել: Ուզում եմ . . .

## ՍՈՒՐԱՏ

Ի՞նչ եղաւ քեզ. հանդարտութիւն:

ՔՍԱՆՏԻՊ, որին կատաղութիւնը խեղ-  
ղում է:

Ուզում եմ . . .

Կուրծքս արնով լցվում է . . .

Խեղդպաւմ եմ . . . Մեռնում եմ . . . Օ՛դ . . . օ՛դ . . . օ՛դ:

Ընկնում է նստոցի վրայ, որինը շրջուած և անկենդան:

## ՍՈՒՐԱՏ, տակնուվրայ եղած:

Ուշը, Միրրին, գնում է: Զուր հասցրու:

Չոզում է Քսանտիպի ոսկերի մօմ և աշխատում է նորան յես բերլ:

Միրրին, ամանով ջուր բերելով:

Երբ աչքերը նորա բացուին, նրան կ'ասեմ . . .

## ՍՈՒՐԱՏ

Արսկենք քունքերն և ճակատը: Տեսնում ես, ։

Զիւնը անշարժ դէմքի վրայ փովում է:

Ախ, Միրրին, սա մեռնում է:

## ՄԻՐՐԻՆ

Զի մեռնիլ:

Հանգիստ եղեր, Սոկրատ: ԵԽ էլ կին մարդ եմ:

Նա ապրում է: ԵԽ այդ զիտեմ ինչ բան է:

ՍՈՒՐԱՏ, Քսանտիպի վրայ խոնար-  
հուած:

Արի, Քսանտիպ: Բաց աչքերդ: Կեանփի եկ:

Տես լուռթիւնդ ինձ ինչ ցաւով պատում է:

Լսիր դու ինձ: Խօսիր դու ինձ: ՈՇ, մունչ է

Բերանն: ՈՇ գիբ: Ընկնվում եմ: Խղճացէք

Տառապանքիս: Համէք օգնել, Ասուածներ:

Մինչ Սոկրատ արտասանում էր այդ տողերը, ներս են մտել  
Անտիթենէս, Պրաքսիս, Եւպոլիս, Գրակէս, Մելիտաս, Բարիս  
և բոլոր այն անձնինք, որոնք երեւացել են չորրորդ տեսիլում:

## ՏԵՍԻ, ՈՒԹԵՐՈՐԴԻ

Միրրին, Սուրատ, ՔսանտիՊ, ԱՅՏԻՍԹԵՆԷՍ, Պրաքսիս, ԵԽ  
Պօլիս, Գրակէս, Մելիտաս, Բարիս, Քալկանաթը եւ ԱԹԵՆՈՅԻ  
ԿԱՆԱՔԻՑ:

Գրակէս, Սոկրատին:

Ի՞նչ կայ, ի՞նչ սուզ, ի՞նչ կոծ է:

Միրրին, մատը շրթումբներին դնե-  
լով:

Սուզ, Գրակէս:

Գրակէս

Միրրինն այսուհեղ: Ի՞նչ հրաշք է:

ԱՅՏԻՍԹԵՆԷՍ, Սոկրատին

Այս ի՞նչ լաց:

ՍՈՒՐԱՏ, ցոյց տալով Քսանտիպին  
ուշաթափ:

Քսանտիպին նայեցէք:

ՊՐԱՔՍԻԱՍ

Ի՞նչ, քննած է:

ՍՈԿՐՈՏ

ՄԵՌԱՆՌԱՄ Է:

ՄԵԼԻՏՏԱ, ՔԱԱՆԱԲԻԱԲԻՆ ՆԱՅԵԼՈՒԾ յետ:

Մի՛ հաւատար:

ԲԱՔԻՄ, նոյնն անելով:

ԳՈՒԱԳԻՌ

ԱՍՏՈՒԱՃՆԵՐԻԳ: Նա ապրում է և շնչում:

ՄԵՐԲԻՆ, ՍՈԿՐԱԹԻՆ:

Եւ կը տեսնես իւր աչքերի բացուելը

Պայծառ լոյսում երկնքի:

ՄԵԼԻՏՏԱ, ՍՈԿՐԱԹԻՆ:

ԱՐԻԱԳԻՌ,

Ուսուցիչ:

ՄԵՐԲԻՆ, ներկաներին, առանց ՍՈԿՐԱԹԻՑ լսուելու:

ԲԱՐԿՈՒԹԻՆԻՌ նուազեց:

Ճշմարիտ է մարած է. բայց խոհեմ է

ԶԼԻՆԵԼ տարապայման անհանգիստ:

ՍՈԿՐՈՏ

ՕԳՆԵՑՔ սրան:

ԲԱՔԻՄ, ծիծաղելով՝ ՄԵԼԻՏՏԱՅԻՆ:

ՑԱՆԿՈՒԹԻԿԱՆԸ լրում տանք:

ՍՈԿՐՈՏ

Թափառական հոգին ըլինիՌ սլանայ:

Կանայթ շրջապատում են ՔԱԱՆԱԲԻԱԲԻՆ, բայց առանց ընաւ անհանգատութեան: Առկրատ ուզում է նրանց հետ խառնուել, եթէ Եւ պօլիս կանգնեցնում է նորան և անցըը փակում:

ԵԿՊՈԼԵՄ, ծաղրական կերպով:

Վախդ հէնց այդ է:

ՊՐԱԿԻՍ

Դրա համար է կոծդ:

ՊՐԱՔՍԻԱՍ

Ի՞նչ. ուրեմն դորա համար է լացը:

ԱՆՏԻՍԹԵՆԵՄ

Բարեկամներ, մի խելազար կնոջ համար, —

ՊՐԱԿԻՍ

Մի անհամբոյր, —

ԵԿՊՈԼԵՄ

Մի անարդար, —

ԱՆՏԻՍԹԵՆԵՄ

Մի մոպյլ, —

ՊՐԱՔՍԻԱՍ

Խօսքը թունու, —

ԱՆՏԻՍԹԵՆԵՄ

Միոքը խանզար, —

ՊՐԱԿԻՍ

Լեղի կաթ, —

## ԵՐՊՈՒՅԹ

Որ նորան ճկեցնում է իբր եղէզն, —  
Եւ ճղոցով վրդովմունք է միշտ հանում:

## ԲԱՐԵՒ

Թէ, արդարեւ, քեզի պէտք է մի լաւ կին, —

## ՄԵԼՔՍՅ.

Ու աւելի հեզ, —

## ԲԱՐԵՒ

Այժմ իսկ գտնել կարող ես:

## ԱՆՏԻՍԹԵՆՆԵՅԹ

Որ չնմանուիս խենթերին, մի՛ լար զլուխը  
Մի չարիքի, որից ի դէպ փրկվում ես:

## ՍՈՎԻԱՏ

Լուցէք: Ամայացեալ իմ տանից  
Գորս է զնում քսանտիպ, որի կորուսոն  
Անդարման՝ ես զզում եմ իմ սրտում:  
Զի նորա կատաղութիւնն օգտաւէմ՝  
Սպառնալից խարազան էր, որի խիստ  
Խարող չեփը, լաւութեանս զարթուցիչ,  
Հրահանգում էր համբերութիւնս և ոյժս:  
Երբ զալիս էր մէկը թափել իմ տան մէջ  
Մեղկ շողումը իւր նուրբ թոյնով, և երբ որ  
Մինչ յատակը, ապրելուս վրայ գոհ՝ հպարտ,  
Քամում էի քաղցր մեղրը խաբուսիկ  
Որ մեզ խելքից հանում է, քսանտիպս  
Ժանտ, անընտել որքան ծովը, շուտով ինձ  
Իւր զառնահամ լեղիովը բուժում էր:  
Յաճախ անգամ, բարեկամներ, ամէնքից  
Գովասանուած, հասկանում էշ, կարծել եմ

Աստուածական իջած լինել մի ցեղից.  
Բայց խայթուսող նորա չունչը սահելով  
Լերկ ճակատիս վերայ, ինձի ասում էր.  
« Հէնց առաջին պատահողի մէկն ես գու »:  
Աննշան անդորրութեան գրկումը,  
Աքը ասես մեռելութեան մէջ փակած,  
Մեր լաւութիւն նմանում է ձիերին  
Պատերազմի, որոնք մարգաց կանանչում  
Թուլանում են: Ես էլ երբոր, ժամելով  
Դէպի երկինք ծիրանեզոյն, մտափորհ  
Մնում էի մուռանալով ամէն բան,  
Ծէզէ ծգին մօտ էր վազում Քսանտիպ,  
Եւ իւր կանչը, որպէս ծայնեղ մի շեփոր,  
Մթափում էր ինձ:

## ՊՐԱԲՈՒԱՄ

ԵԿ, ուսուցիչ, մեզի հետ

## ԱՆՏԻՍԹԵՆՆԵՅԹ

Ազատ ամէն կապանքնից, մտածի՛ր:

## ԵՐՊՈՒՅԹ

Մենք կը լսենք քո նուրբ զրոյցն իրերի  
Յաւերժութեան և մեծազօր Դից մասին,  
Նստած ծորան Խլիսոսի դափնեաց տակ:

## ԲԱՐԵՒ

Եւ ովք զիտէ, արեւի տակ լուսաւու,  
Մի նորածին սէր կը լուծէ քո սրտի  
Հանելուկը, խորհրդաւոր Եղիպոս<sup>21</sup>, —

## ՄԵԼՔՍՅ.

Եւ կը սփոփէ Քսանտիպիդ համար քեզ:

## ՍՈՎԻԱՏ

Երբ նա չկայ, այլ կերակրի չունիմ քաղ,

Բաց կը մնայ նորա-տեղը:

Բուռն և պարզամիտ վշտով,

Էլ ո՞ր մին

Գերազանցօքէն նախատակոծ կ'անէ ինձ:

Քսանտիպի հետ յուզմունքի ծոցն ապրելով,

Վախ չունէի էլ ոչ ծփուղ ամբոխից,

Ոչ կայծակից, ոչ կարկուտից, ոչ քամուց,

Ոչ արեւից, ոչ ցրտաշունչ ձմեռից:

Դմաստութիւնս առանց նորան տեւիլ չի:

Հեղեղի պէս որոտագոչ իւր ձայնը

Աչքս բաց էր պահել տալիս. ինքըս ինձ

Ասում էի ամէն վայրկեան. «Տգէտ մարդ,

Խորհիր, ուսիր, սովորիր: Անպէտ ստրուկ,

Աշխատիր»:

### ԵԽՊՈԼԻՍ

Նրան այդ կողմից չի հասնիլ

Եւ ոչ մէկը:

### ՊՐԱՔՍԻԱՍ

Բուքը նրանից կը սարսէր, —

### ԱՆՏԻՄԹԵՆՆԵՍ

Փոթորիկն էլ:

Քսանտիպ սթափում է առանց միւսներից նկատուելու, ականջ է զնում իւր ամուսնու խօսքերին, նախ զարմանքով, յետոյ անյաշ գաբար լսում է, և հետզհետէ աւելի ու աւելի գրաւուած նորա խօսելուցը, բազուվները տարածում է զէպի Սոկրատ: Այդ պահին միայն Սիրրինն է նորա կողքին:

ԱՌԱԲԱՏ, իւր մաքի ետեւից:

Այդպէտ դէպի խորախոր

Անեղբութեան լոյսերի մէջ, ուր կեանքը

Համէկան սփրոռած է, ուլանում է,

Միաբաս և ոյժս հետ տանելով, քսանտիպ,

Եւ իւր վրայ եմ ես լալիս: Բայց ինչո՞ւ

Այն էլ չ'ասեմ: Սիրում էի ես նորան:

ՔՍԱՆՏԻՊ, ինքն իրան:

Ի՞նչ է ասո՞ւմ: Ինձ սիրում է: Այդպիսի

Ուրախութիւն առաջինն է ինձ համար:

ՄԻՐՐԻՆ, քսանտիպին:

Զի վերջապէս նորից տեսնում ես լոյսը,

Շուտ, ուսուցչին կանչենք, սփոփենք:

Կանչելով Սոկրատին, որ չի լսում:

ՍՈԿՐԱՏԵՍ:

ՔՍԱՆՏԻՊ, ձեռքով փակելով Միրրինի  
բերանը:

Բան մի՛ ասեր: Թո՛ղ, թող խօսի:

ԱՌԱԲԱՏ, իսր զզացուանով:

ԵՍ ՆՈՐԱՆ

Սիրում էի, զի խեղճ մարդու ամուսին

Հաւատարիմ, նա ապրում էր ինձ համար,

Լաւ, չափաւոր, խնայասէր: Տնապահ,

Աչք ածելով ամէն բանի, էր նա իմ

Ընկերուհին, և, լաւ քան այն ամէնքը

Որոնց գովիք մեղրը զգվում էր քիմքս,

Սիրում էր ինձ, ես էլ նորան, և էլի

Դեռ սիրում եմ:

ՔՍԱՆՏԻՊ, փակելով դէպի Սոկրատ:

Թա՞նգ ՍՈԿՐԱՏԵՍ, ի՞նչ, դու ինձ

Սիրում էիր:

ԱՌԱԲԱՏ

Քսանտիպն, ի՞նքը. անմահ Դիք:

ԱՆՏԵՍԹԵՆԵՅ

Դժոխքը նորան ներս ընդունել չէ ուզել:

ՔՍԱԽՏՎՊ, յափշտակուած, Սոկրատին:

Այդ լսելուց, էլ կարելի՞ է չ'ապրել:

ՍՈԿՐՈՍ

Ի՞նքը. Քմանտի՞ պ, կենդանացած:

ՔՍԱԽՏՎՊ

Եւ շիտկուած:

Այս, ինելքի եմ զալիս: Զուրկ ամէն

Բարի բանից, ցանում էի սարսափը

Ուր և ասես, ողջ տեղովս լինելով

Կառաղութիւն, մոլեզնութիւն. ի՞նչ ասես

Որ ես չէի – յիմար, անգութ, զարշելի,

Անարժան ոք, անընտանի, սեւացնող

Ազանուն էլ, կարապին էլ, մի խօսքով

Աւելի չար քան թէ Պիւթօն վիշապը<sup>22</sup>:

Բայց պատիժը կը տաս գու ինձ, բարեկամ:

Գնում է մի փայտ վերցնում և բերում Սոկրատին:

Առ այս փայտը, չորս տակ հասու է, կը դիմնայ:

ՍՈԿՐՈՍ

Իրաւ: Սակայն ի՞նչի՞ է պէտք այս փայտը:

ՔՍԱԽՏՎՊ

Ինձ ծեծելու: Այս, դու պիտ' ինձ ծեծես:

ՍՈԿՐՈՍ

Ես. բայց ի՞նչո՞ւ:

ՔՍԱԽՏՎՊ

Պատժելու բարկութեան

Իմ կրքերը, իմ կանցոցներ, իմ լացեր,

իմ բարձր սիրու, իմ չարութիւն հազուագիւտ  
Եւ իմ զայրուցքներըն անիրաւ:

Կամքս է, ահա, սոցա առջեւ ինձ ծեծես,

Այս բոլորի: Փոքրներն էլ, որ տեսնեն,

Թող զգները երկնցնեն: Դէ՞ն, ծեծիր:

Հարուածներիդ տակ ուզում եմ շունչս տալ:

Ես էի, ինձ սիրելիս, քեզ ծեծում:

Սիրան ես եմ, այժմ դու պիտ' ինձ ծեծես:

Թանգ ամուսին, լալիս էիր և ահից

Գոյնդ գնում էր, ինձի մեռած կարծելով:

Դէ՞ հիմի խզմալ պէտք չէ, ծեծիր ինձ:

ՍՈԿՐՈՍ

Ո՛չ:

ՔՍԱԽՏՎՊ

Իմ Սոկրատ, սրտի հատոր, ծեծիր, շնոր:

ՍՈԿՐՈՍ

Չեմ ծեծիր:

ՔՍԱԽՏՎՊ

Աղաչում եմ, քեզ խնդրում եմ

Ինձ ծեծես:

ՍՈԿՐՈՍ

Չէ, ասում եմ:

ՔՍԱԽՏՎՊ

Պաղատում եմ

Լաւ, հերիք է:

ՔՍԱԽՏՎՊ

Վայաբար նորան երկնցներով:

Ո՛ռ, մի՛ այդքան շուռումուռով

ինձ տանջեր: Ծեծիր, Սոկրատ:

ՍՈԿՐԱՏ

Ամենեւի՞ն:

ՔՍԱՆՏԻՊ

Արեւդ սիրես:

ՍՈԿՐԱՏ

ՈՌ ա՛սես, չէ:

ՔՍԱՆՏԻՊ

Կոյն է թէ ինձ անարգել:

ՍՈԿՐԱՏ

Մերժելլ

Ոչ բնաւ:

ՔՍԱՆՏԻՊ, լաւ սկսելով:

Ծեծիր ինձ:

ՍՈԿՐԱՏ

Դէ հիմ' արի լացը տես:

Դու ուզում ես . . .

ՔՍԱՆՏԻՊ

Հարիւր հարուած եմ ուզում:

ՍՈԿՐԱՏ

ՔՍԱՆՏԻՊ

Արա ինձ այդ պարգեւը: Դու հարիւր  
Տուր ինձ հարուած:

ՍՈԿՐԱՏ

Ո՛չ:

ՔՍԱՆՏԻՊ

Պակսեցնել չեմ կարող:

ՍՈԿՐԱՏ  
Լոիր, Քսանովիպ: Հարկաւոր է . . .

ՔՍԱՆՏԻՊ, ուզ զետնին ծեծելով, բար-  
կովեամբ:

Ինձ ծեծել:

ՍՈԿՐԱՏ, աչքերն երկինք բարձրա-  
ցնելով:

Ե'կ, օգնի՛ր մեզ:

Ապոլօն, լոյս, միոք, շողք,

Քսանտիպին:

Զեռք վերառնենք այդ բանից:

ՔՍԱՆՏԻՊ, պինդ մնալով:

Համբուրում եմ ծնկներդ:

ՍՈԿՐԱՏ, բաղցրութեամբ համոզելով:

Գեղ ծեծել

Յիմարութիւն կը լինէր:

ՔՍԱՆՏԻՊ, զայրանալով:

Ո՛վ գեղ բախտ,

Այդ քիչ բանն էլ պիտի խնայէ նա ինձնից:

Ի՞նչ հիմա: Մահըս այնպէս լալուց յետ

ինձ ուսի տակ պիտի կոխես. ինձ պիտի

Չծեծեմ զու: Զգուայի՛ր:

ՍՈԿՐԱՏ, բարեմառնեամբ

ՈՌ սիրոդ

Դէպի բարին է ճիզն անում, շատ լաւ է.

Բայց կամենալ աչքի տակը ամենքի

Ծեծուել, բերել նոյն իսկ փայտ, դա, իմ կին,

Է Քարիբդից Ակելայի մէջ ընկնել<sup>28</sup>:

ՔԱԱՆՏԻՊ, արդէն մուեզնած :

ՍԿԻԼԱՅԻՇ : Ուրեմն հրէշ եմ ես էլ :  
Կլանում եմ նաւորդներին : Դեռ էլի՞  
Պիտ' հայհոյես : Ծեծելու ես՝ եթէ՞ ոչ :  
Սոկրատ չի պատասխանում :  
Ուզում չե՞ս :

ՍՈԿՐՈՏ

ՉԷ :

ՔԱԱՆՏԻՊ

ՉԵ՞ : Ի՞նչպէս չէ . կը ծեծես,  
Կամ եօ ես չեմ :

ՍՈԿՐՈՏ

ԱՄՈՒՄ ԵՄ ՉԵ՞ :

ՔԱԱՆՏԻՊ, համբերութիւնից դուրս,  
ԴԵԾԻՐ ինձ :

ՍՈԿՐՈՏ

Ո՛չ, չերքիւլէս նպաստաւորը վկայ :

ՔԱԱՆՏԻՊ

Ուզում չե՞ս :

ՍՈԿՐՈՏ

Ո՛չ :

ՔԱԱՆՏԻՊ

Ո՛չ ասում ես :

ՉԵ՞ն ձգելով փայտը և Սոկրատին մի ապատկ հասցնելով :

Ահա՛, քե՞զ :

ՔԱԱՆՏԻՊ ապշաճ իւր իսկ արածի վրայ, և որպէս շանթահար ։  
Բնկնում է Սոկրատի սորբերը :

ՏԵՍԻԼ, ՈՒԹԵՐՈՒՐԻ

47

ՔԱԱՆՏԻՊ, ձնկի վրայ, ամօթահար :

Ողորմելի . Ահա նորից գլորուած  
Մոլորութեան գիրկը : Քսանտիպդ ոչ ինչ է  
Եթէ ոչ այսահարութիւն և լլկանք :  
Այդպիսի նիւթից շինուած, աւաղ, նա  
ինչի՞ է պէտք :

ՍՈԿՐՈՏ, բարձրացնելով նորան և թե-  
ւերի մէջ առնելով :

Մէկին փիլիսոփայ անելու :

Գրակալին :

Եւ դու, Գրակէս, բոնիր ձեռքը Միրրինի .  
Կուշտ համն առէք, առանց վաղուան մնալու,  
Երջանկութեան, որ շնորհում են Գիր առաս .  
Գուք և նոյնպէս, յաւելուածով, կ'ունենաք  
իմաստութիւնն :

ՔԱԱՆՏԻՊ, Սոկրատի գրկի մէջ : Հասրա-  
կութեանը :

Կնոջից է վասը .

Խաւարած միտք, շահի ծարաւ, մատնութիւն,  
Ոսկի զաւաթ ուր գինու հետ խառն է գիրտն,  
Ամէն եղենն, ամէն պատրանք խաբուսիկ,  
Կորանից է յիմարութիւն ամենայն :

ՍՈԿՐՈՏ

Պաշտեցէք սակայն նորան, քանի որ  
Որարողը Աստուածներն են :

Փոքր մտածելուց յետ :

Եւ նոցա

Արածներից էլի որ լաւը դա է :

Վարագոյրն իջնում է :

— 2 —

## ԾԱՆՈԹԱԿԱՆ

### ԹԱՐԳՄԱՆՈՂԻՑ

1. Սոկրատ, հոչակաւոր աթենացի փիլիսոփան, - որին Աթենքի Մհամանների առեանը զատապարտեց մոլեխինդը խմելով մնանելու (400 թ. Քրիստ. առաջ)՝ իր այն՝ թէ նա կամնում էր կրօնաբը տապալել իր նոր սոսումով, — հին իմաստութեան գերազոյն անձնաւորումն էր: Ասոր կեանքն ու վարդապետութիւնը, ժամանակի դատաւորներից զատապարտուած, իւր արդարութեան ու անմաշութեան խարիսխն եղան: Ան' առում է Քանոնին նորա աշակերտը, նորա վահմ մորերին յարմար էր և մեծարաննելլ: Բարեկամներից մին զարմացած, որ նա իմաստափրական խնդիրների վրայ խօսելով աշակերտների հետ, ամենեւնի իսկ մարով չըր անցկացնում իւր դատը, չարցնում է. Պէտք չէ, ով Սոկրատ, մոտածել պատասխան տալ նաև անձիղ համար: — Ան' թէ, առում է նա, չես բնորոշում որ ևս ամրացն կեանքս զորա վրայ ևմ զործ զրել. որովհետեւ յեմ յիշում քե ևս մի անիրաց բան գործած լինեմ:

Սոկրատ, այդ հեթանոս մեծ վարդապետը, ուսուցանում էր համացելով և հաւանեցնելով. իսկ թէ որքան զեղեցիկ էր իւր Առումը, այդ այսուհետ, ներկայ վիպերգութեան մէջ, որանչելապէս հանգիստում է մեր առաջ Թ. զր Բանովիլ: Հրաշալի է տեսնել Սոկրատին իրեւ կեանքի մի զործաւոր, իրեւ մի ապրով մարդ և իրեւ առօրեայ կեանքում ուսուցիչ: Հրաշալի է տեսնել և իրը շօշափել նաև յափառեական միտք Քանոնիպին, որի կողքին տիկ զերական փիլիսոփայ դարձաւ արձանագործի որդին Աթենացի Սոկրատը, Խլսոսի զավճիների սոսուերում՝ անմաշութիւն զործող կեանքի մասին քարոզողը:

2. Հիմէթը մի լեռ է, Աթենքից հարաւարեւելք, փոքր հեռաւուրութեան վրայ: Այնաեղ մեղմոներ էին բուծանում. Համբաւ ոնկը մեղրը իւր պատականութեամբ:

3. Աւկիրիադ աթենացի հոչակաւոր զօրավարն է: Աշակերտուած Սոկրատին, որու սկզբունքներին հետեւով էր նա, թէեւ վիրը զորուեց ընկաւ ամին տեսակ զեղիսութեան մէջ: Համբաւի ծարաւ,

նա ոչ միայն առաստանեամում էր, այլ և, որպէս զի իւր վրայ խօսել առաջ և ժողովրդի ուշը զրաւէ, արտասոց բաներ էլ էր անում, որպէս պոչառակը իւր այն գեղեցիկ և մեծազնի շամն, փարթամ կենանի, որ Աթէնքի հիացման առարկան էր:

4. Քարմիզ, Աթէնքի իշխանաւորներից մին էր:

5. Պինքըս մի հրապարակ էր Աթէնքում: Այնտեղ էլն զումար վում ժողովրդի ժողովները:

6. Ամբոսսական անօթ: Ամբոսսիա նշանակում է անմահութիւն: Առասպելին համաձայն, ամբոսսիան մի անուշահամ խորտիկ էր, որով կերպիկում էին Ալիմպական Աստուածները: Կա անմահութիւն էր պարզեւում ճաշակողին: Այստեղ համարփում է նա Կեկտարը լինել, որ նոյն Աստուածների ըմպելին էր, նոյնպէս անմահական:

7. Կարծրաստին Սպարտան, ասում է հեղինակը: Յայտնի էր պատերազմակը քաղաքը իւր չոր ու խօստ բարբով, իւր առակաւոր սակաւապետութեամբ, խմելով աղքատիկ թանը, ժամանակ նրբութիւնն ու նըրացնող փափկացնող արուեստները, և, արծուի նման, իւր ժայռի գլխից, ուր աչքով դիմելով որոր միայն և սրանալով նորա վրայ՝ աւարահարութեամբ և աշխարհակալութեամբ մոլուած:

Կուտաճել այդ բրտութիւնը, բարեկի այդ կարծրութիւնը՝ – ազնուացնող, փափկացնող, հեղացնող, քաղաքակրթուղ գեղարուեստների քաղցր լծի տակ, ահա ուր էր ձկուում Քաղաքը, Աթէնասի զաւակերպ, աստուածային Աթէնքը, որի սրանցելի մեծազրծութիւնն է պանծացնում այստեղ Առկրատ՝ այնքան զրաւիչ և համազիր պերճախօսութեամբ:

8. Երկրէս և փոքր յետոյ Ասփոկէս և Եւրիփիկէս Աթէնքի թատերական փառքերն էն, մեծ քաղաքի անմահութեան կոթոզները: Առաջնը (525-456 թ. ա.) յունական որբերգութեան հայրը, հանճարների շարքից է, անյատակ խորութեամբ, անմատելի բարձրութեամբ, ուր սուզվում և ուր ունաում են մարերը, որոնք կում են Ակրպանաչեան և Եքեղեցիկան կոմիրը, աստուածային հուրը երկնքից զողացող Պրօմեթեաներ:

Եպելէսի հրաշակերտների հրաշակերտը Օրեստիա ողբերգութիւնն է, եռախօսութիւն՝ ամփոփելով երեք գործ — Ազամենոն, Քօէֆորները (Նուբրաբերներ) և Եւմենիդները (Կաստղիք):

9. Գիւմակաւոր Մեկացի՝ Սպարտն էլն Քամբեսի բանակում, որ քրոսակալիս ողողել էր Եւլազան: Մեկացին կրկայն էլն թողնում

վարսր, ուսերի վրայ ծփուն, որպէս դեռ այսօր էլ շատերը Քիւրդերից:

10. Պրօպիլէս, այդպէս են կոչվում Աթէնքի Սիչնարերդի (Ակրոպոլիս) նախագաները, կամարակապ սրահաւոր, հոյակերտ սիւնագաւոր, ողջը մարմարինից զեղակերտուած:

11. Իւր բաջաստիր կոնչը – Հերալին, սորա հպարտ, նախանձաւ, ամբարտաւան և բինախնդիր բարբը պատժել ուզենաւով, Արամազդ այդպէս, սաքերիցը զարբնասաւը թաշ, կախ էր արել Երկնիրի ձեղունից:

12. Կեփիսոսը զետ է, որ Աթէնքի հիւսիսային կողմերից իջնելով զալիս է Խափիլում ծովը բաղարի հարաւ – արեւմուաքում: Գեհի ափերին ամում էլն ասփնիներ:

13. Պէկիլա ասուածը Աթէնքի սիւնազարդ, կամարակապ սրահաւորից մին էր, հիւսիսակոզմում:

14. Պոնիբրան և Փալերան նաւակայան, նաւահանգիստ էլն, ուր խնավում էր Աթէնական ամբոխը:

15. Խլիսոս, այլ զետ Աթէնքի հարաւից, իջնելով ծովը Կեփիսոսին զուզընթաց՝ սորա հարաւից:

16. Ատակէ յունակն այն երկրին էր, որի մայրաքաղաքն էր Աթէնքը: Համեղի հաշակ սունէին ատակեան թուզերը: Բայց ոչ ինչ հաւասարուել կարող չէր համեղութեամբ այն նուրը զրոյցին, չնորդը կաթեցնող շարժուածքին, սրամիս, աշխայժ և զիճող խօսրին, որով փայլում էր Աթէնական հանճարը, և խօսքի այդ սարազը աստիվեան աղ էր կոչուած, նշանակելով նորս այդ երկրին յատկապէս բնիկ լինելը: Այդ չնորդալի ձիրը մշակելուն և զործ զնելուն հրամիրում է Սոկրատ զեղանի կնազը, հասկացնելով որ եթէ համը է լեզման և թըրած է միարը, զեղեցկութիւնն, ինքը միայն, շուտ կը զարարի զրաւիչ լինելուց:

17. Գալատէա Առասպելի յաւերժական հարսերից մին էր, որի արձանը կոփել էր Պիզմալին համբաւաւոր արձանագործը, և այնքան զուսպ ու զեղեցիկ, որ ինքն արուեստաւորը սիրահարուել էր իւր սրանչելի ձեռակերտին: Կիպրուէին Աստղիկ մի օր մօտիք անցնելիս, և ողորուելով այնքան չերմ սիրուց, լեզու առեց արձանին, որով և Պիզմալին անքալ կալուեց նորա հետ:

18. Արիազնէ կամ Արիանա Արետէի արբայ Մինոսի զուսպն էր: Աթէնքը Արետէից յաղթուած՝ պարտաւորուել էր տարին եօթն պատահուուչի ուղարկել կողին՝ Մինօտաւրուին

(մարդկացու) կերակուր լինելու: Արբայրպի թեսեւսին վիճակ էր ընկել և օթիս պատահներից մէկը լինելու: Արխարդն սիրահարվում է պատահումն: Եթր առ կրեակի բաւկղը, խաւարչամին Լարիւրին՝ թառը պիսի մանէք ընկերներից ինըն ասաշինը, արբայրպաւարը՝ կծիկ թելի մի ճայրը տալիս է նորա ձեռքս, որ եթէ բաւէ կենակի մեայ, որպէս յոյս ունէք փեցազնը, թելը վերակծելով կարենայ անմուար վերադարձ անել լոյս աշխարհը:

Այլարմանում է դա սէրս, որ ճեղիկ մրմուճով սիրս է տալիս և ասաշնորում է մեզ կենակի մրկոս պայտըների մէջով:

19. Հեկատէ, նոյն ինըն Արտեմիս կամ Դիմանան է (Անահիտը մեզում), որ երկնում Փերէ էր կոչվում (Լուսինը), իսկ դժոխում Հեկատէ անունն էր կրում:

20. Պայտ (Յայտնա), առասպէլական, խաւառուրդ էր այծի և մարդու, այծ էր նա ականջներնի և պոչով, տարրեր այծամարզից (Աստիր), որի ոտերն ու սրուններն էին այծի: Ասաշինը դաշտերի էր շահապես, երկրորդը անտառների: Երկուսն էլ վաւաշոս էին, այժմարայ, յաւերժահարսերի ետեւից միշտ ընկած:

21. Եվփասո Լայոսի, թերէի թագաւորի որդին էր: Մի չարտշոնչ գուշակութան երսից, թէ նա մի օր սպանելու էր հօրս և ամուսնալու էր մօրը հետ, ընկեցիկ լինելով մահուան էր մատնուած: Բայց պահում է նորան լեռան հովիւր մահից: Մեծացած՝ նու մի օր իջում է լիսներից գաշտը և թերէի ճանապարհի վրայ հոնդիպում է Ովինըսին, որ անորդներին տանդուած էր առաջարկում և պատառում էր չհանդիպն, արհաւերը սփուկով երկրի վրայ: Եվփասո լուծում է տուեղուածը. իսկ Սփինըսը պարտութիւնից մոլորդնած հովիւր է ծովը և կարչում: Յաղթողն յասաջ մղելով թայր գէպի քաղաք՝ հանդիպում է թագաւորին, որից անարգանը կրելով երը ճանապարհից ջխտարուելուն չամար, զայրացած սպանում է նորան, որ ինըն իսկ էր Լայոսը: Թէրէն Արփինըսին յաղթողին թագաւոր է հոչակւում: Եղիպատ այրիպացած թագուհուն իրան կին է անում: Այդպիսով այդ խորհրդաւոր զիմի վրայ կատարվում է լրիւ չարադէտ գուշակութիւնը:

Մթին, զուռարին իմաստները, խրթին և կնճռու հանելուկիները, խնդիրները լուծողին Եղիպատ անունն են տալիս:

22. Պիութօն, վիթխարի օծ, որ ճանապարհի վրայ պառկած՝ խավանում էր անցըրը ուղեւորի տաջեւ Պատնասսո լեռն ի վեր, որ նուրիսական էր Ապոլօնի և Սուսաններին: Ապոլօն նկտահար սպանեց արհաւերական հրէշին:

23. Վարիրդից Սկիլլայի մէջ ընկնել, այսինքն վատից վատթարի մէջ հոսուել:

Մեսինայի նեղուցում, Սիկիլիայի և Խոտիայի միեւն, զմոխապույտ յորձանքներ կային, Վարիրդա մէկի անունը, Սկիլլա միւս սինը: Նորա նաւորդների ահուզովն էին, որոնք մէկից հազիւ ճողոպրած՝ միւսին կուլ զնալու վտանգի մէջ էին:



Հ.Ս.Ֆ.Հ. ՀԱՅՐԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
\* Հ.Ս.Ֆ.Հ. Պանական Բանական Արքայութեան  
7/II. 1922  
Ա. ԱՅԱ ԿԱՅԱՆԻ ԱՆԴՐ



20.11.20

20.11.20

ՀԱՅԻ Ե. Հա., 0, 50



84  
P-27